ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/42» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Խաչատրյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Գասպարյան, Ա. Մինասյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ի. Եղիազարյան

Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

(Ա. Խաչատրյան)

1. Փաստաթղթերի գնահատման՝

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ.

-օրը՝ 18.02.2019թ., -ժամը՝ 11:30

Ընդունել ի գիտություն որ.

1.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, որի տրամադրված եզրակացության համաձայն՝ Ա.Ձ. Մեսրոպ Խլղաթյանը հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 12000 /տասներկու հազար/ ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

1.2 Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետով և «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետով՝ որոշեց մերժել Ա.Ձ. Մեսրոպ Խլղաթյանի հայտը և «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Հանձնաժողովի

Նախագահ՝	----------	Ա. Խաչատրյան
Անդամներ՝	----------	Ա. Գասպարյան
	----------	Ա. Մինասյան
Քարտուղար՝	----------	Ի. Եղիազարյան